



Հաստատված է  
«ՌԵՍՈ» ամահովագրական ՓԲԸ  
Խորհրդի կողմից  
15.06.2013 թ.-ին

**ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ  
ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**2013թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ
5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ
8. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ
12. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
13. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
14. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
15. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
16. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ
17. ՍՈՒԲՐՈԳԱՑԻՍ
18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

## 1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- 1.1. Ապահովագրող՝ «ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված և ՀՀ տարածքում ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:
- 1.2. Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձ:
- 1.3. Շահառու՝ Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցումներ ստանալու համար նշանակված իրավաբանական կամ ֆիզիկական անձ: Շահառու կարող է լինել այն անձը, ով օրենքով, այլ իրավական ակտով կամ պայմանագրով շահ ունի ապահովագրված հատուկ տեխնիկայի (այսուհետ նաև՝ ՆՏ) պահպանման հարցում:
- 1.4. Ապահովագրության օբյեկտ են համարվում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի կամ Շահառուի այն գույքային շահերը, որոնք կապված են ՆՏ, լրացուցիչ սարքավորման վնասվելու, ոչնչացման կամ կորստի հետ:
- 1.5. Ապահովագրական գումար՝ ապահովագրության պայմանագրով որոշված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պատահարի տեղի ունենալու պարագայում, ապահովագրության պայմանագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում:
- 1.6. Ապահովագրավճար՝ ապահովագրության դիմաց տրվող վճարն է, որը Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին ապահովագրության պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:
- 1.7. Չհատուցվող գումար (ֆրանշիզա)՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված վնասի այն մասն է, որը ենթակա չէ Ապահովագրողի կողմից հատուցման և կարող է սահմանվել ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ ապահովագրական գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսի միջոցով: Չհատուցվող գումարը վերաբերում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարին և նվազեցվում է ապահովագրական հատուցումից յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:
- 1.8. Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափ՝ գումար, որը չի գերազանցում Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը, և որի շրջանակներում Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովագրական հատուցում Պայմանագրի գործողության ընթացքում:
- 1.9. Ապահովագրության տարածք՝ տարածք, որտեղ տարածվում է Պայմանագրի իրավական ուժը և Պայմանագրում նշված Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:
- 1.10. Հատուկ տեխնիկա՝ մեքենաներ, որոնց միջոցով կարելի է իրականացնել նեղ մասնագիտական աշխատանքներ և լուծել դժվար իրագործելի խնդիրներ այդ աշխատանքում:
  - 1.10.1. Ճանապարհաշինարարական մեքենաներ՝ նախատեսված են շինարարական աշխատանքների իրականացման, ինչպես նաև ճանապարհների շահագործման ապահովման և պահպանման համար:
  - 1.10.2. Վերամբարձ կռունկներ՝ նախատեսված են բեռների և մարդկանց հորիզոնական, ուղղահայաց և թեք հարթության վրա տեղափոխելու համար՝ համեմատաբար ոչ մեծ տարածություններում, գործարաններում, շինհրապարակներում, նավահանգիստներում, պահեստներում և այլն: Դրանք համարվում են արդյունաբերության, շինարարության, լեռնաարդյունաբերության և գյուղատնտեսության մեջ բարձր և բեռնաթափման հիմնական միջոցներ:
  - 1.10.3. Գյուղատնտեսական տեխնիկա՝ սրանք տեխնիկական միջոցների զգալի մասն են կազմում՝ նախատեսված են գյուղատնտեսության մեջ աշխատանքների առանձին

տեխնոլոգիական գործընթացների մեխանիզացման և ավտոմատացման արդյունավետության բարձրացման համար:

- 1.10.4. Ինքնագնացներ (թրթուրավորներ)՝ նախատեսված են հողի և գրունտի հարթեցման և տեղափոխման և այլ մասնագիտական աշխատանքների համար:
- 1.10.5. ՀՏ լրացուցիչ սարքավորում՝ ՀՏ գործարանային հավաքակազմի մեջ չմտնող սարքավորում, այսինքն՝ այնպիսի սարքավորում, որը տեղադրված է ՀՏ դրա արտադրությունից (հավաքումից) հետո՝ ոչ ՀՏ արտադրող գործարանի կողմից:
- 1.11. Ապահովագրական ռիսկ՝ դեպքի կամ իրադարձության տեղի ունենալու հավանականություն, որի ուժով իրականացվում է ապահովագրությունը: Դեպքի կամ իրադարձության տեղի ունենալու հավանականությունը, որը դիտվում է որպես ապահովագրական ռիսկ, պետք է օժտված լինի պատահականությամբ:
- 1.12. Ապահովագրական պատահար՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի վրա հասնելու արդյունքում առաջանում է Պայմանագրով նախատեսված Ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:
- 1.13. Ապահովագրության պայմաններ՝ սույն ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է ապահովագրության պայմանագիրը: Ապահովագրության պայմանները կազմում են ապահովագրության պայմանագրի անբաժանելի մաս:
- 1.14. Ապահովագրության պայմանագիր՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պայմանագրով սահմանված վճարի դիմաց ապահովագրական պատահարի առաջացման դեպքում հատուցել Ապահովադրին կամ այլ անձին, ում օգտին կնքվել է պայմանագիրը, ապահովագրված գույքին պատճառված վնասը, որն առաջացել է այդ պատահարի հետևանքով կամ Ապահովադրի գույքային շահերի հետ կապված այլ վնասը: Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն ապահովագրության սույն Պայմանների նկատմամբ:
- 1.15. ՀՏ ապահովագրության դիմում՝ Ապահովագրողի պահանջով վերջինիս սահմանած տիպային ձևով Ապահովադրի կողմից գրավոր ներկայացվող տեղեկություններ: Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից՝ Ապահովադրի խոսքերից ելնելով: Դիմումում ներառված տեղեկությունների իսկությունը Ապահովադրի հաստատում է իր ստորագրությամբ:
- 1.16. Ապահովագրության սույն Պայմանների շրջանակներում առանձին տերմիններով տրված են հատուկ սահմանումներ, որոնք կիրառելի են միայն ապահովագրության սույն Պայմանների շրջանակներում:

## **2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 2.1. Սույն Պայմանների հիման վրա և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողն Ապահովադրիների հետ կնքում է հատուկ տեխնիկայի (այսուհետ՝ ՀՏ) ապահովագրության, ՀՏ լրացուցիչ սարքավորման ապահովագրության պայմանագրեր:
- 2.2. Ապահովադիր կարող է լինել անձը, ով ՀՏ հանդեպ ունի գույքային շահ և տիրապետում է ՀՏ-ին՝ սեփականության իրավունքով, ՀՏ-ի սեփականատիրոջից ստացված լիազորագրով, հավատարմագրային կառավարման իրավունքով, ՀՏ սեփականատիրոջ հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա:
- 2.3. Սույն պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի գործողությունը տարածվում է ՀՀ և ԼՂՀ տարածքում, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, բացառությամբ զինված հակամարտությունների, պատերազմների, արտակարգ իրավիճակների տարածքների:
- 2.4. Սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված բոլոր ծանուցումները և լրացուցիչ փաստաթղթերը ուղարկվելու են Ապահովադրին և/կամ Շահառուին Պայմանագրում նշված հասցեներով:

**2.5. Ցանկացած դեպք, որը ծածկույթի մեջ ներառված չէ, ապահովագրական պատահար չի համարվում :**

**3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ**

3.1. Սույն Պայմանների հիման վրա ապահովագրության ենթակա են.

3.1.1. **Հատուկ տեխնիկա (ներառյալ՝ լրացուցիչ սարքավորում), որի շահագործումը թույլատրվում է ընդհանուր օգտագործման ճանապարհներին.**

3.1.1.1. Ավտոմեքենաներ-հատուկ տեխնիկա (*ավտոկռունկներ, ավտոամբարձիչներ և այլն*)

3.1.1.2. Հատուկ հենասահքով ավտոկռունկներ

3.1.1.3. Անվավոր ինքնագնաց մեքենաներ (*ուղեհարթիչներ (գրեյդերներ), էքսկավատորներ, տրակտորներ և այլն*)

3.1.1.4. Անվավոր էքսկավատորներ, ավտոբեռնիչներ

3.1.1.5. Ճանապարհաշինարարական մեքենաներ (*ասֆալտափոփիչներ, բետոնափոփիչներ և այլն*)

3.1.1.6. Գյուղատնտեսական նշանակության տեխնիկա (*կոմբայններ, խոտհնձիչներ, խոտհավաքներ և այլն*)

3.1.2. **Հատուկ տեխնիկա (ներառյալ՝ լրացուցիչ սարքավորում), որի շահագործումը չի թույլատրվում ընդհանուր օգտագործման ճանապարհներին**

3.1.2.1. Թրթուրավոր մեքենաներ (*ասֆալտափոփիչներ, բետոնափոփիչներ, թրթուրավոր տրակտորներ և այլն*)

3.1.2.2. Թրթուրավոր էքսկավատորներ, թրթուրավոր ամբարձիչներ

3.1.2.3. Վերամբարձ կռունկներ (բացի ավտոմոբիլայիններից) (*աշտարակավոր, թրթուրավոր, դարպասային, բարձրակավոր, ինքնագնաց և այլն*)

3.1.2.4. Հանքարդյունահանման ավտոմեքենաներ

3.1.2.5. Շինարարական հորատման մեքենաներ

3.1.2.6. Ստացիոնար շինարարական տեխնիկա (*բետոնախառնիչ, բետոնամղիչ, ասֆալտախառնիչ և այլն*)

3.1.2.7. Գյուղատնտեսական կցորդային տեխնիկա

**3.2. Ապահովագրման ենթակա չեն.**

3.2.1. Արժեքավոր, եզակի թանգարանային ցուցանմուշները.

3.2.2. Մրցույթների և ուսումնական դասընթացների համար նախատեսված ՀՏ

3.3. Լրացուցիչ սարքավորումն ապահովագրվում է նույն ռիսկերից, ինչ-որ այն հատուկ տեխնիկան, որի վրա այն տեղադրված է:

**3.1.3. Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն՝**

3.1.3.1. ՀՀ օրենսդրության համապատասխան ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով ապահովագրության պայմանագրում (ապահովագրական վկայագրում) նշված ապահովագրված ՀՏ-ի պատճառով՝ երրորդ անձանց (տուժածների) կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի հատուցման պատասխանատվություն:

**4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ**

4.1. **Ընդհանուր օգտագործման ճանապարհներին շահագործման ենթակա հատուկ տեխնիկան ապահովագրվում է հետևյալ հիմնական ռիսկերից՝**

4.1.1. «Վնաս»՝ ապահովագրված ՀՏ-ի, կամ նրա մասերի վնասումը կամ ոչնչացումը, որը տեղի է ունեցել.

➤ Ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ) հետևանքով, այդ թվում շարժվող կամ անշարժ առարկաների հետ բախման դեպքում (շինություններ, արգելքներ, կենդանիներ և այլն),

➤ Շրջման հետևանքով,

- Հրդեհի, հրդեհի մարման, պայթյունի հետևանքով,
- Տվյալ տեղանքի համար անսովոր տարերային աղետների հետևանքով,
- Ջրասուզման հետևանքով
- Ապահովագրված ՀՏ-ի վրա կողմնակի առարկաների վայր ընկնելու կամ դրանց ՀՏ-ին դիպչելու հետևանքով,
- Ապահովագրված ՀՏ-ի նկատմամբ երրորդ անձանց կողմից իրականացված հակաօրինական գործողությունների հետևանքով (ներառյալ՝ ապահովագրված ՀՏ-ի առանձին մասերի և դետալների առևանգումը):

4.1.1.1. Ապահովագրական պատահար չի համարվում.

- ապահովագրված ՀՏ-ի ապրանքային արժեքի կորուստը, շահագործման հետևանքով հատուկ տեխնիկայի բնական մաշվածությունը,
- ՀՏ-ի ապակիների և դռների բաց թողնելու հետևանքով վնասների առաջացումը,
- սրահի երեսպատման վնասումը (ծխախոտ, սուր կտրող առարկաներ և այլն),
- ՀՏ անհապաղ վերանորոգման հետ կապված ծախսերի իրականացումը,
- գործիքների հավաքածուի, դեղարկղիկի, կրակմարիչի, վթարային կանգառի նշանի, ստացիոնար հակաառևանգման միջոցների/համակարգի կողոպուտը, վնասումը, ոչնչացումը,
- ապահովագրված ՀՏ-ի հաշվառման համարանիշերի հափշտակումը,
- ապահովագրված ՀՏ-ի մասերի, հանգույցների և ագրեգատների կոտրումը, խափանումը, շարքից դուրս գալը, այդ թվում նաև՝ ագրեգատների ներքին խոռոչների մեջ կողմնակի առարկաների և նյութերի ներթափանցման արդյունքում (հիդրոհարված և այլն),
- կցորդների և կիսակցորդների ապահովագրության ժամանակ պարուսինաձածակի կողոպուտն ու վնասումը:

4.1.2. Սույն Պայմանների շրջանակներում «Առևանգում» ռիսկի տակ հասկացվում են հետևյալ իրադարձությունները.

- «Գողություն»,  
«Գողություն» ասելով հասկացվում է՝ ապահովագրված ՀՏ-ի գաղտնի հափշտակությունը՝ վերջինիս բանալիների, պահակային կառավարման և/կամ որոնողական, և/կամ պահակային/որոնողական համակարգերի, և/կամ գրանցման փաստաթղթերի (ՀՏ գրանցման մասին վկայականի և/կամ ՀՏ տեխնիկական անձնագրի) բացակայության պայմաններում:
- «Կողոպուտ»  
«Կողոպուտ» ասելով՝ հասկացվում է ապահովագրված ՀՏ-ի բացահայտ հափշտակությունը, որը կատարվել է Ապահովադրի կամ ապահովագրված ՀՏ-ն վարելու լիազորություն ունեցող այլ անձի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով՝ ապահովագրված ՀՏ-ն հափշտակելու համար նրանց կողմից ցուցաբերած դիմադրությունը ճնշելու նպատակով:
- «Ավազակություն»  
«Ավազակություն» ասելով հասկացվում է՝ ապահովագրված ՀՏ-ի կորուստը՝ բացահայտ հափշտակության հետևանքով, որը կատարվել է Ապահովադրի կամ ապահովագրված ՀՏ-ն վարելու լիազորություն ունեցող այլ անձի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ ապահովագրված ՀՏ-ն հափշտակելու համար նրանց կողմից ցուցաբերած դիմադրությունը ճնշելու նպատակով,
- «ՀՏ-ին ապօրինաբար տիրանալը (փախցնելը) առանց հափշտակելու նպատակի՝ առանց փաստաթղթերի»  
«ՀՏ-ին ապօրինաբար տիրանալը (փախցնելը) առանց հափշտակելու նպատակի՝ առանց փաստաթղթերի» ասելով հասկացվում է՝ ապահովագրված ՀՏ-ին

ապօրինաբար տիրանալը այլ անձանց կողմից՝ դրա բնօրինակ բանալիների, պահակային կառավարման և/կամ որոնողական, և/կամ պահակային/որոնողական համակարգերի, և/կամ գրանցման փաստաթղթերի (ՀՏ գրանցման մասին վկայականի և/կամ ՀՏ անձնագրի) բացակայության պայմաններում,

4.1.2.1. Ապահովագրական պատահար չի համարվում.

Ապահովագրված ՀՏ-ի չվերադարձնելը Ապահովադրին վարձույթի, վարձակալության, լիզինգի փոխանցված ՀՏ-ի համար, սույն Պայմանների 4.1.2. կետում չնախատեսված այլ դեպքերում:

4.1.3. «Լրացուցիչ սարքավորմանը» հասցված վնաս ասելով հասկացվում է՝ ապահովագրված ՀՏ-ի վրա տեղադրված լրացուցիչ սարքավորման վնասում, կորուստ, ոչնչացում 4.1.1. և 4.1.2. կետերում թվարկված դեպքերի արդյունքում:

4.1.3.1. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրական պատահար չի համարվում վնասը, որն առաջացել է՝

- ապահովագրված ՀՏ-ի լրացուցիչ սարքավորման ապրանքային արժեքի կորստի, լրացուցիչ սարքավորման շահագործման հետևանքով առաջացած բնական մաշվածության արդյունքում, շարժական առջևի պանելով ապահովագրված ավտոմագնիտոլայի կամ առջևի պանելի կողոպուտի, վնասման, ոչնչացման հետևանքով, եթե առջևի պանելը թողնվել է ապահովագրված ՀՏ-ում:
- Եթե ՀՏ-ն ապահովագրված չէ «Վնաս» ռիսկի գծով, ապա սույն ապահովագրության Պայմանների 4.1.1. կետով թվարկված «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով դեպքերը ապահովագրական պատահարներ չեն համարվում:
- Եթե ՀՏ-ն ապահովագրված չէ «Կողոպուտ» ռիսկի գծով, ապա սույն ապահովագրության Պայմանների 4.1.2. կետով թվարկված «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով դեպքերը ապահովագրական պատահարներ չեն համարվում:

4.1.4. Բոլոր ռիսկերի գծով ապահովագրական պատահարներ չեն համարվում.

4.1.4.1 Բարոյական վնասը, բաց թողնված եկամուտը, հասարակ ու հարկադիր պարապուրդը, եկամտի կորուստը և այլ անուղղակի և տնտեսական կորուստները, վնասները և ծախսերը, կրած կամ իրականացված ինչպես Ապահովադրի և Շահառուի, այնպես էլ երրորդ անձանց կողմից, ինչպես օրինակ՝ տուգանքները, ապահովագրված ՀՏ վերանորոգման ժամանակ հյուրանոցում բնակվելու համար արված ծախսերը, գործուղման ծախսերը, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ժամկետների հետ կապված ծախսերը և այլն:

4.1.4.2 Դեպքերը, որոնք առաջացել են ապահովագրված ՀՏ-ում գտնվող գույքի վնասման հետևանքով՝ ապահովագրական պատահարի պահին:

4.1.4.3 Դեպքերը, որոնք տեղի են ունեցել Ապահովադրի, Շահառուի, ապահովագրության պայմանագրով ապահովագրված ՀՏ-ն վարելու լիազորություն ունեցող անձի, ապահովագրված ՀՏ-ի ուղևորի կանխամտածված գործողությունների արդյունքում՝ ուղղված ապահովագրական պատահարի առաջացմանը, կամ վերը նշված անձանց կողմից հանցագործության կատարման կամ հանցագործություն կատարելու փորձի արդյունքում:

4.1.4.4 Դեպքերը, որոնք տեղի են ունեցել ապահովագրված SU-ն այն անձի կողմից վարելու ժամանակ, ով՝

- ապահովագրության պայմանագրում չի հանդիսանում լիազորված վարորդ կամ չունի SU-ը վարելու իրավունք տվող վարորդական վկայական,
- չունի տրանսպորտային միջոցը վարելու իրավունք տվող վարորդական վկայականի համապատասխան կարգ,
- գտնվում էր ակոնոլի, թմրադեղերի, SU վարելու ընթացքում հակացուցված տոքսիկ նյութերի կամ դեղամիջոցների ազդեցության տակ, անկախ արյան, արտաշնչած օդի,

մեզի կամ մագերի մեջ դրանց պարունակության չափից, ինչպես նաև, եթե SU վարորդը փախուստի է դիմել ՃՏՊ-ի վայրից կամ հրաժարվել է անցնել բժշկական փորձաքննություն:

4.1.4.5. Դեպքերը, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի տարածքից և գործողության ժամկետից դուրս:

4.1.4.6. Մրցույթների, փորձությունների կամ ուսումնական երթերի ժամանակ ապահովագրված ՀՏ-ի օգտագործման ընթացքում:

4.1.4.7. Դեպքերը, որոնք տեղի են ունեցել ապահովագրված ՀՏ-ի լիզինգի, վարձակալության, վարձույթի հանձնելու կամ գրավադրման արդյունքում՝ առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության:

4.1.4.8. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել Ապահովագրի կամ լիազորված վարորդի կողմից ՀՏ շահագործման կանոնների խախտման արդյունքում, այդ թվում՝ ՀՏ օգտագործումը տեխնիկապես անսարք վիճակում և այն պայմաններում, որոնց դեպքում ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով արգելվում է դրանց շահագործումը, և որը չի անցել տեխնիկական զննություն սահմանված կարգով, ինչպես նաև հակահրդեհային պաշտպանության կանոնների, պայթյունավտանգ և հրդեհավտանգ նյութերի և առարկաների փոխադրման և պահպանման կանոնների, բեռների փոխադրման ընթացքում պահանջվող կանոնների խախտման արդյունքում (համաձայն ճանապարհային երթևեկության կանոնների):

4.1.4.9. Դեպքերը, որոնք տեղի են ունեցել վառելիքի, պայթյունավտանգ ապրանքների և այլ ապրանքների տեղափոխման, բեռնման, բեռնաթափման ընթացքում պայթյունի կամ հրդեհի հետևանքով, որոնք նախատեսված չեն ապահովագրված հատուկ տեխնիկայով տեղափոխելու համար:

4.1.4.10. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել ապահովագրված ՀՏ-ի բեռնման, բեռնաթափման կամ փոխադրման ժամանակ ցանկացած տրանսպորտային միջոցով (բացառությամբ ապահովագրված ՀՏ-ն քարշակով տանելը ճանապարհային երթևեկության բոլոր պայմանների պահպանմամբ, ինչպես նաև վնասված ապահովագրված ՀՏ փոխադրման դեպքերը հատուկ դրա համար նախատեսված տրանսպորտային միջոցով):

4.1.4.11. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ներգործման հետևանքով:

4.1.4.12. Դեպքեր, որոնք տեղի են ունեցել ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների և գործադուլների հետևանքով պետական մարմինների կարգադրությամբ ապահովագրված ՀՏ-ի բռնագրավման, առգրավման, կալանքի կամ վերացման դեպքում:

4.1.4.13. Անվաղողերի, անվահեծերի և կողային հայելիների գողություն (բացառությամբ պահեստային անվաղողի կողոպուտի):

4.1.4.14. ՀՏ շահագործման արդյունքում շարքից դուրս եկած մասերի, հանգույցների, ագրեգատների վնասվելը:

4.1.4.15. Բնական գործոնների (ավազ, աղ, փոքր չափի քարեր, ծառերի կամ թփուտների ճյուղեր, ավտոմեքենայի լվացում և այլն) ներգործության պատճառով ՀՏ լաքաներկային ծածկի վնասումը, որը թափքի կամ նրա առանձին մասերի երկրաչափական չափսերի ձևախախտման չի հանգեցրել:

4.1.4.16. ՀՏ մարտկոցի կամ այլ էլեկտրասարքավորումների վնասումը թույլ միացման հետևանքով, որոնք չեն հանգեցրել այլ վնասների:

## **4.2. Շինհրապարակում շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող հատուկ տեխնիկական ապահովագրվում է հետևյալ ռիսկերից՝**

4.2.4. «Հրդեհ, կայծակի հարված».



Սույն Պայմանների շրջանակներում հրդեհ ասելով պետք է հասկանալ կրակի վառման և պահպանման հատուկ վայրերից դուրս առաջացած կամ այդ վայրերի սահմաններից դուրս եկած անվերահսկելի կրակը, որն ունակ է ինքնուրույն տարածվելու և նյութական վնաս հասցնելու:

Սույն Պայմանների շրջանակներում կայծակի հարվածն իրենից ներկայացնում է որոտային էլեկտրական լիցք, որի դեպքում էլեկտրականությունը ջերմային, մեխանիկական և էլեկտրական ազդեցություն է թողնում ապահովագրված գույքի վրա:

4.2.4.5. Սույն ռիսկի գծով հատուցվում է այն վնասը, որն առաջացել է.

- 1) ապահովագրված գույքի վրա կրակի, վառվող արտադրանքի, տաք գազերի, հրդեհի արդյունքում առաջացած բարձր ջերմաստիճանի ազդեցության հետևանքով,
- 2) ապահովագրված գույքի վրա վթարի հետևանքով ազատված շիկացած ձուլվածքների (բացի ձուլվածքները պարունակող բուն անոթների և սրվակների) ընկնելու հետևանքով,
- 3) ապահովագրված գույքի վրա կայծակնային էլեկտրական պարպման (կայծակի հարված) ազդեցության հետևանքով,
- 4) ապահովագրված գույքի վրա հրդեհի մարման և կանխարգելման նպատակով օգտագործված հրդեհամարման միջոցների ազդեցության հետևանքով:

4.2.4.6. Սույն ռիսկի գծով Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ՝

- 1) Կրակի հասցրած վնասը, որն առաջացել է ոչ հրդեհի պատճառով, ինչպես նաև ապահովագրված գույքը կրակով, ջերմությամբ մշակելը կամ այլ ջերմային ազդեցության ենթարկելը՝ դրա հատկությունները փոխելու նպատակով կամ տեխնոլոգիական գործընթացին համապատասխան (օրինակ՝ չորացում, ջերմային մշակում կամ մետաղների հալում):
- 2) Հրդեհից առաջացած վնասը, որը բռնկվել է երրորդ անձանց հակաօրինական գործողությունների արդյունքում, հատուցման ենթակա չէ, եթե Պայմանագրով լրացուցիչ չի ապահովագրվել երրորդ անձանց հակաօրինական գործողությունների արդյունքում առաջացած վնասներից և ոչնչացումից:

#### 4.2.5. «ՊԱՅԹՅՈՒՆ»

Սույն ռիսկի գծով հատուցվում են վնասները, որոնք առաջացել են.

- 1) գոլորշու կաթսաների, գազի պահեստների, գազատարների, մեքենաների, սարքերի և այլ համանման սարքավորումների պայթյունի հետևանքով,
  - 2) փոշեգազային խառնուրդի պայթյունի հետևանքով:
- Պայթյունը կարճ ժամկետում սահմանափակ ծավալով մեծ էներգիայի նպատակային անջատման գործընթաց է, որը պայմանավորված է գազերի ընդարձակման հատկությամբ:

4.2.5.1. Պայթյունավտանգ նյութերի պայթյունից առաջացած վնասը հատուցվում է, միայն եթե նախատեսված է Պայմանագրով: Պայթյունավտանգ նյութեր ասելով պետք է հասկանալ մեծ քանակի ջերմությամբ և գազերի անջատմամբ ուղեկցվող և հատուկ այս կամ այն ձևով պայթյունի անցկացման համար նախատեսված արագ քիմիական ռեակցիայի մեջ մտնող քիմիական միացություններ կամ նյութերի խառնուրդներ:

4.2.5.2. «ՊԱՅԹՅՈՒՆ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, Ապահովագրական պատահար չի համարվում և չի հատուցվում.

- 1) ներքին այրման խցիկներում կատարվող պայթյունների հետևանքով ներքին այրման շարժիչներին կամ համանման սարքավորումներին և ագրեգատներին պատճառված վնասը,

- 2) վակուումի առկայության կամ ռեգերվուարում գազի պարպման արդյունքում առաջացած վնասը:

#### 4.2.6. «ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է՝

- 1) երկրաշարժի, հրաբխի ժայթքման հետևանքով առաջացած վնասները,
  - 2) ջրհեղեղի հետևանքով առաջացած վնասները,
  - 3) մրրիկի, փոթորիկի, բքի հետևանքով առաջացած վնասները,
  - 4) ցունամիի հետևանքով առաջացած վնասները,
  - 5) սողանքի, գրունտի նստվածքի, քարահոսքի, ձնահոսքի ցեխահոսքի հետևանքով առաջացած վնասները,
  - 6) կարկուտի հետևանքով առաջացած վնասները:
- Երկրաշարժ՝ երկրի ընդերքում տեղի ունեցող բնական գործընթացների արդյունք, որոնք ուղեկցվում են ստորգետնյա ցնցումներով և երկրի մակերևույթի տատանումներով:
  - Հրաբխի ժայթքում՝ հրաբխային գործընթաց, որն ուղեկցվում է հրաբխի խառնարանից գազերի, քարերի, մոխրի և մագմայի եռման արտահոսքով:
  - Ջրհեղեղ, հեղեղում՝ ջրային զանգվածի արտահոսք ջրավազանի սովորական սահմաններից, որն առաջանում է ձյան ինտենսիվ հալոցքի, մեծ քանակությամբ տեղումների, ջրի քամու կողմից քշվելու, սառցե խցանումների, ջրամբարների և ամբարտակների վնասվելու, լեռնային զանգվածների՝ ջրի ակունքներ թափվելու արդյունքում, ինչը խոչընդոտում է ջրի բնականոն հոսքին:
  - Փոթորիկ՝ երկարատև և ուժգին քամի ավելի քան 35 մ/վ արագությամբ:
  - Բուք՝ երկարատև և ուժգին քամի ավելի քան 16.6 մ/վ արագությամբ:
  - Մրրկայտուն՝ ամպրոպաբեր ամպի մեջ առաջացող և ներքև տարածվող, արագ պտտվող օդի, խոնավության, ավազի, փոշու և այլ կախույթահեղուկներից բաղկացած մթնոլորտային պտտահողմ, որի պտույտի արագությունը կազմում է ավելի քան 50 մ/վ:
  - Ցունամի՝ մեծ բարձրության ծովային ալիքներ (մինչև մի քանի տասնյակ մետր), որոնք առաջանում են ծովի հատակի տեղաշարժի հետևանքով՝ երկրաշարժերի, սողանքների և հրաբխի ժայթքման արդյունքում:
  - Սողանք՝ հողային զանգվածի տեղաշարժ թեք լանջից՝ սեփական ծանրությամբ պայմանավորված:
  - Գրունտի նստվածք՝ բնական ճաքերի կամ հողային դատարկությունների մեջ գրունտի իջեցում՝ բնական երևույթների արդյունքում, այդ թվում գրունտային ջրերի մակարդակի փոփոխության, կարստային կամարների փլուզման, տորֆի հանքակուտակների այրման արդյունքում և այլն:
  - Քարահոսք՝ լեռնային զանգվածների հանկարծակի փլուզում՝ կայունության կորցման արդյունքում, քարերի զլորվելը լեռնալանջերից:
  - Ձնահոսք՝ ձյան զանգված, որն ընկնում կամ սահում է լեռնալանջերից ավելի քան 20 մ/վ արագությամբ:
  - Ցեխահոսք՝ ցեխային կամ ցեխաքարային հոսանքներ, որոնք հանկարծակի առաջանում են լեռնային գետերի ակունքներում տեղի ունեցած հեղեղումների պատճառով՝ առատ տեղումների և ինտենսիվ ձնհալքի արդյունքում:
  - Կարկուտ՝ մթնոլորտային տեղումների տարատեսակ, որն արտահայտվում է երկնքից թափվող տարբեր չափի սառցե գոյացությունների տեսքով:
    - 4.2.6.1. Երկրաշարժից, սողանքից, գրունտի նստվածքից վնասները հատուցման ենթակա են միայն այն դեպքում, եթե ապահովագրված օբյեկտի շահագործման ժամանակ պատշաճ կերպով հաշվի են առնվել այդ տեղանքի սեյսմիկ և երկրաբանական պայմանները:
    - 4.2.6.2. Փոթորկից, բքից, մրրկայտունից առաջացած վնասները հատուցվում են

միայն այն դեպքում, եթե վնաս պատճառած քամու արագությունը գերազանցել է 60 կմ/ժ-ը (16,6 մ/վ) և հաստատված է ՀՀ համապատասխան հիդրոմետ ծառայության տեղեկանքով:

4.2.6.3. Ջրհեղեղից առաջացած վնասները հատուցվում են միայն այն դեպքում, եթե վնաս պատճառած ջրի մակարդակը գերազանցել է ՀՀ համապատասխան հիդրոմետ ծառայության կողմից սահմանված նորմատիվային մակարդակը:

4.2.6.4. «ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որն առաջացել է.

- 1) սողանքի, գրունտի նստելու, քարահոսքի, ձնահոսքի, ցեխահոսքի, տեղանքի հեղեղման արդյունքում, եթե դրանք տեղի են ունեցել պայթյունային աշխատանքների, փոստրակներից կամ քարհանքերից գրունտի հանման, հողային կամ շինմոնտաժային աշխատանքների, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման և մշակման արդյունքում,
- 2) ապահովագրված օբյեկտի վնասվածքը, կորուստը, ոչնչացումը, որը տեղի է ունեցել մրրիկի, փոթորկի, բքի, ուժեղ քամու կամ օդային զանգվածների այլ շարժի արդյունքում, որոնք հանդիսացել են մթնոլորտում բնական պրոցեսների հետևանք, եթե քամու արագությունը չի գերազանցել 20,8 մ/վրկ:

#### 4.2.7. «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է՝

- 1) Փլուզման, շինությունների կոնստրուկտիվ տարրերի մասնակի կամ ամբողջական վնասման, ինչպես նաև դրանց թույլատրելի շեղումների գերազանցման հետևանքով առաջացած վնասները, որոնք սպառնում են պայմանագրային աշխատանքների անվտանգ անցկացմանը և խոչընդոտում են օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացմանը,
- 2) Հողի իջեցման, կատիվաններում և խրամատներում գրունտի սահքի (հոսքի) պատճառով առաջացած վնասը,
- 3) Ապահովագրված գույքի տապալման, անկման հետևանքով առաջացած վնասը,
- 4) Շինհրապարակում անշարժ կամ շարժական գույքի հետ հատուկ տեխնիկայի բախման հետևանքով առաջացած վնասը,
- 5) Շինհրապարակում բեռնման և բեռնաթափման հետևանքով առաջացած վնասը:

#### 4.2.8. «ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

4.2.8.1. Սույն ռիսկի գծով հատուցվում է երրորդ անձանց այն հակաօրինական գործողությունների հետևանքով ապահովագրված հատուկ տեխնիկային հասցված վնասը, որոնք ՀՀ գործող քրեական օրենսդրության համապատասխան որակվում են որպես.

- 1) գույքի դիտավորությամբ ոչնչացում կամ վնասում,
- 2) խուլիզանություն, վանդալիզմ,
- 3) ներխուժման միջոցով գողություն, կողոպուտ, ավազակություն,
  - Պայմանագրի շրջանակներում ներխուժման միջոցով գողություն ասելով՝ հասկացվում է ապահովագրված հատուկ տեխնիկայի գաղտնի հափշտակությունը, այսինքն՝ դրա ապօրինի առգրավումը երրորդ անձանց պատկանող փակ տարածություն մուտք գործելու հետևանքով:
  - Պայմանագրի շրջանակներում «Կողոպուտ» ասելով հասկացվում է հատուկ տեխնիկայի բացահայտ հափշտակությունը, այդ թվում իրականացված հետևյալ ճանապարհով.

- 1) Ապահովագրված հատուկ տեխնիկան բռնագրավելու համար Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց նկատմամբ նրանց դիմադրությունը ճնշելու նպատակով կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության կիրառման ճանապարհով,
- 2) Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց կյանքը և/կամ առողջությունը վտանգի տակ դնելու ճանապարհով:

➤ Պայմանագրի շրջանակներում «Ավագակություն» ասելով հասկացվում է ապահովագրված հատուկ տեխնիկան հափշտակելու նպատակով իրականացված հարձակումը, որը կատարվել է Ապահովադրի կամ նրա մոտ աշխատող անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

4.2.8.2. Ապահովագրողը հատուցում է ապահովագրված հատուկ տեխնիկային հասցված այն վնասը, որն առաջացել է դրա ապահովագրության տարածքում կամ ապահովագրության տարածքից փոխադրման ժամանակ դրա կողոպուտի արդյունքում:

4.2.9. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՈՂՈՊՈՒՏ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որն առաջացել է.

- 1) Ապահովադրի հետ համատեղ բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց կողմից կոտրանքով գողություն, կողոպուտ, ավագակություն իրականացնելու դեպքում,
- 2) Ապահովադրի մոտ աշխատող անձանց կողմից կոտրանքով գողություն, կողոպուտ, ավագակություն իրականացնելու դեպքում,
- 3) Ապահովադրին վերջինիս կողմից վարձակալության, լիզինգի, գրավի, վարձույթի տրված հատուկ տեխնիկայի չվերադարձնելու դեպքում պատճառված վնասները,
- 4) կոտրանքով գողությունից, կողոպուտից կամ ավագակությունից տարբերվող այլ եղանակով ապահովագրված հատուկ տեխնիկայի անհետացման, կորստի արդյունքում առաջացած վնասը:

4.2.10. «ԵՐԴՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չի վնասը, որն առաջացել է.

- 1) ապահովագրված գույքի անհետացման, գողության, կորստի ենթարկվելու կամ անհիմն յուրացման արդյունքում,
- 2) այն ապահովագրված գույքի նկատմամբ երրորդ անձանց հակաօրինական գործողությունների արդյունքում առաջացած վնասը, որն այդ անձանց փոխանցվել է Ապահովադրի կողմից վարձակալության, լիզինգի և այլ պայմանագրով,
- 3) ապահովագրված գույքի վրա նկարների, գրությունների, պատատների սոսնձման և այլ նմանատիպ գործողությունների իրականացման արդյունքում,
- 4) Ապահովագրված հատուկ տեխնիկայի գտվելու վայրում կամ նրա մոտակայքում հողային կամ շինմոնտաժային աշխատանքների անցկացման արդյունքում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
- 5) աղտոտման կամ կոռոզիայի դեպքում:

#### **4.3. Ընդհանուր օգտագործման ճանապարհներին շահագործման ոչ ենթակա հատուկ տեխնիկան ապահովագրվում է հետևյալ ռիսկերից՝**

##### **1) Հիմնական ռիսկեր՝**

- 4.3.1. Հրդեհ, պայթյուն, կայծակի հարված
- 4.3.2. Տարերային աղետներ
- 4.3.3. Արտակարգ իրավիճակներ
- 4.3.4. Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ

## 2) Լրացուցիչ ռիսկեր

### - Ռիսկ «Գ» - (Բեռների ապահովագրության պայմաններ)

Սույն ռիսկի գծով հատուցվում է՝

- փոխադրամիջոցի վրա հրդեհի բռնկվելու կամ պայթյունի տեղի ունենալու,
- փոխադրամիջոցի շրջվելու,
- փոխադրամիջոցի գծերից դուրս ընկնելու, ցամաքային տրանսպորտային միջոցի հետ ճանապարհատրանսպորտային պատահարի,
- փոխադրամիջոցի ցանկացած արտաքին օբյեկտի հետ բախվելու, բացառությամբ ջրի հետ շփման,
- բեռնման և բեռնաթափման հետևանքով առաջացած վնասը:

Սույն ռիսկի գծով հատուկ տեխնիկան կարող է ապահովագրվել միայն, եթե այն ապահովագրված է հիմնական ռիսկերից (հրդեհ, տարերային աղետներ, արտակարգ իրավիճակներ, երրորդ անձանց հակաօրինական գործողություններ և այլն):

*Հատուկ տեխնիկայի ապահովագրության ժամանակ Ռիսկ «Գ»-ն գործում է միայն հատուկ տեխնիկան համապատասխան տեղադրամբ և ամրացմամբ ավտոքարշակով կամ բեռնատարով տեղափոխելիս: Տեխնիկան, որը տեղափոխվում է քարշակով՝ սեփական անիվներով, Ռիսկ «Գ»-ով ապահովագրման ենթակա չէ, այն կարող է ապահովագրվել վնաս, գողություն ռիսկերից՝ կոշտ (ամուր) շղթայով տեղափոխման պայմանով:*

## 5. «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով ապահովագրություն կարող է իրականացվել, միայն եթե հատուկ տեխնիկան ապահովագրված է մնացյալ ռիսկերից (հրդեհ, տարերային աղետներ, արտակարգ իրավիճակներ և այլն):

5.1. «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով հատուցման ենթակա է պատճառված ուղղակի իրական վնասը, որն առաջացել է ապահովագրության պայմանագրում նշված ՀՏ-ի վարման ընթացքում ապահովագրական պատահարի արդյունքում տուժածի կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասվածքի հետևանքով: Պատճառված նյութական վնասը գնահատվում է դրամային արտահայտությամբ:

5.2. Կյանքին և առողջությանը հասցված վնաս է համարվում՝

- 5.2.1. առողջության վատթարացման հետևանքով տուժածի կորցրած աշխատավարձը (եկամուտը)
- 5.2.2. վնասվածքի ստացման հետևանքով արված լրացուցիչ ծախսերը, այդ թվում բուժման ծախսերը, սնվելու ծախսերը, դեղամիջոցների ձեռքբերման, պրոթեզավորման, խնամողի, առողջարանային բուժման, հատուկ SU-ների ձեռքբերման, այլ մասնագիտության պատրաստման ծախսերը, եթե հաստատվի, որ դրանք բխում են լրացուցիչ օգնության և խնամքի անհրաժեշտությունից, որոնց կարիքը տուժածը ունի, բայց իրավունք չունի դրանք ստանալ անվճար,
- 5.2.3. Տուժածի մահվան արդյունքում արված ծախսերը:

## 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրության ժամանակ ՀՏ-ի, լրացուցիչ սարքավորման ապահովագրական գումարը սահմանվում է ապահովագրության

- պայմանագրով, ընդ որում, յուրաքանչյուր ռիսկի համար կարող է սահմանվել առանձին ապահովագրական գումար:
- 6.2. Ապահովագրության պայմանագրով նշված ռիսկի գծով սահմանված ապահովագրական գումարը այն դրամական գումարն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում (անկախ ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած պատահարների քանակից) վճարել ապահովագրական հատուցում:
- 6.3. Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարները «Վնաս» և/կամ «Կողոպուտ» ռիսկերի գծով գերազանցում են ՀՏ-ի իրական արժեքը, ապա ապահովագրության պայմանագիրը համարվում է առոչինչ ապահովագրական գումարի այն մասով, որը գերազանցում է ՀՏ իրական արժեքը՝ ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ: Այդ դեպքում ապահովագրավճարի հավելյալ վճարված մասը չի վերադարձվում:
- 6.4. Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարները «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով գերազանցում են լրացուցիչ սարքավորման իրական արժեքը, ապա ապահովագրության պայմանագիրը համարվում է առոչինչ ապահովագրական գումարի այն մասով, որը գերազանցում է լրացուցիչ սարքավորման իրական արժեքը՝ ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ:
- 6.5. Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարները «Վնաս» և/կամ «Կողոպուտ» ռիսկերի գծով պակաս են ՀՏ իրական արժեքից, ապա ապահովագրական հատուցման չափը որոշվում է իրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ:
- 6.6. Եթե ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարները «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ցածր են լրացուցիչ սարքավորման իրական արժեքից, ապա ապահովագրական հատուցման չափը որոշվում է իրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ:
- 6.7. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով ապահովագրության պայմանագրում գումարը նշվում է յուրաքանչյուր ապահովագրված օբյեկտի համար առանձին:
- 6.8. Ապահովագրական գումարը (Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ) սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը կարող է նշվել արտարժույթով, որի համարժեքը համապատասխան գումարն է ՀՀ դրամով (այսուհետ՝ ապահովագրություն արժույթային համարժեքով): Ընդ որում, արտարժույթային ռիսկի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Ապահովագրողն իրավունք ունի կիրառել սահմանափակումներ տվյալ արտարժույթի փոխարժեքի փոփոխության չափի վրա: Այդպիսի սահմանափակումների կիրառումը հնարավոր է դրանց ապահովագրության պայմանագրով պատշաճ ամրագրման դեպքում:

## 7. ԶԱՍՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

7.1. Պայմանագրում Կողմերը կարող են սահմանել չհատուցվող գումար, որը վերաբերում է յուրաքանչյուր Ապահովագրական պատահարին և յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի դեպքում նվազեցվում է ապահովագրական հատուցումից: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական և ոչ պայմանական:

## 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ապահովադիրը, Ապահովագրողի պահանջով, պարտավոր է լրացնել Ապահովագրողի կողմից հաստատված ձևի ապահովագրության դիմումը: Ապահովագրության դիմումը լրացվում է կամ Ապահովադրի, կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից: Ապահովադրի խնդրանքով և իր խոսքերով դիմումը կարող է լրացնել նաև Ապահովագրողի ներկայացուցիչը: Դիմումի բոլոր կետերը պետք է լրացվեն այնպիսի ընթեռնելի ձևով, որը կբացառի տրված տեղեկատվության երկակի բացատրությունը: Ապահովագրության դիմումի մեջ նշված տեղեկությունների ճշմարտացիության համար պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված դիմումը ստորագրվում և հաստատվում է Ապահովադրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից:

8.2. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը պարտավոր է՝

8.2.1. Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի այն հանգամանքների մասին, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա արդյունքում հնարավոր վնասների չափը (ապահովագրական ռիսկ) որոշելու համար, եթե այդ հանգամանքները հայտնի չեն և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին: Ամեն դեպքում էական են համարվում Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրում և Ապահովադրի գրավոր դիմումում նշված հանգամանքները:

8.2.2. Ապահովագրողին ներկայացնել ՀՏ վերաբերյալ փաստաթղթերը (գրանցման վկայականը կամ հաշիվ-տեղեկանք, տեխնիկական անձնագիր), ինչպես նաև Ապահովագրողի պահանջով ՀՏ-ին վերաբերող այլ փաստաթղթեր: Օրինակ՝ մաքսային փաստաթղթերը, առուվաճառքի պայմանագիրը:

8.2.3. Եթե Ապահովադիրը ՀՏ սեփականատեր չի հանդիսանում, ապա նա բացի 8.2.2. կետում նշված փաստաթղթերից պարտավոր է ներկայացնել ՀՏ տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթեր:

8.2.4. Ապահովագրողի պահանջով ՀՏ-ն ներկայացնել զննման: Ապահովագրողի կողմից լրացվում է զննման ակտ և ՀՏ լուսանկարվում է: Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում ՀՏ-ի այն վնասների համար, որոնք առկա էին ապահովագրության պայմանագրի կնքման պահին:

8.3. Եթե ապահովագրության պայմանագրի կնքելուց հետո պարզվել է, որ Ապահովադիրն Ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ ապահովագրության Պայմանների 8.2.1. կետում նշված հանգամանքների մասին, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրության պայմանագիրը ճանաչել անվավեր և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հետևանքները:

- 8.4. Ապահովագրողն իրավունք ունի նվազեցնել կամ մերժել ապահովագրական պայմանագրով վճարման ենթակա ապահովագրական հատուցման վճարումը, եթե ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովադիրն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է ապահովագրական ռիսկը գնահատելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ:
- 8.5. Ապահովագրողը ապահովագրության պայմանագրում Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա, նշում է այն անձանց, ովքեր լիազորված են տվյալ ապահովագրության պայմանագրով ապահովագրված ՀՏ վարելու, նրանց ծննդյան ամսաթիվը, վարորդական ստաժը՝ նշելով ստաժի սկզբնական ամսաթիվը (առաջին վարորդական իրավունքի վկայականի ստացման ամսաթիվը):
- 8.6. Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում կարող են սահմանվել ապահովագրվող ՀՏ պահպանման կոնկրետ պայմաններ՝ գիշերային ժամերին:
- 8.7. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա Ապահովադրին տրամադրում է պայմանագրի նոր օրինակ: Նոր օրինակը տրամադրելուց հետո ապահովագրության նախորդ պայմանագիրը (վկայագիր) համարվում է անվավեր և դրա հետ կապված որևէ վճարում չի կատարվում:

## 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 9.1. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ դրամով կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին անկանխիկ փոխանցման ճանապարհով:
- 9.2. Ապահովագրական գումարը արտարժույթով նշելու դեպքում ապահովագրավճարն իրականացվում է ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանած փոխարժեքով:
- 9.3. Մեկ տարուց ոչ պակաս ժամկետով ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովադրին կարող է տրվել հնարավորություն տարածամկետ կարգով կատարել ապահովագրավճարի վճարումը: Ապահովագրավճարի չափաբաժինները և վճարման ժամկետները սահմանվում են ապահովագրության պայմանագրով:
- 9.4. Տարածամկետ կարգով վճարվող ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասն Ապահովադիրը պարտավոր է վճարել ապահովագրության պայմանագրով սահմանված գործողության սկզբից ոչ ուշ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 9.5. Եթե ապահովագրության պայմանագրում նշված է տարածամկետ «կիսամյակը մեկ» կամ «երկու վճարումով՝ յուրաքանչյուր անգամ ապահովագրավճարի 50%-ի չափով» կարգով, վճարվող ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասը չպետք է պակաս լինի ապահովագրավճարի ամբողջ չափի 50%-ից, իսկ



ապահովագրավճարի մնացած մասի վճարման համար չպետք է սահմանվի ավելի ուշ ժամկետ, քան պայմանագրի գործողության ժամկետի կեսը:

- 9.6. Եթե ապահովագրության պայմանագրում նշված է տարածամկետ վճարման կարգ «եռամսյակը մեկ անգամ» կամ «չորս չափաբաժնով՝ յուրաքանչյուրը ապահովագրավճարի 25%-ի չափով», ապա Ապահովադիրը պարտավոր է ապահովագրավճարը վճարել չորս հավասար մասերով: Ապահովադիրը պարտավոր է վճարել երկրորդ, երրորդ և չորրորդ մասերը ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև համապատասխանաբար 3-րդ, 6-րդ և 9-րդ ամիսների լրանալը:
- 9.7. Մեկ տարուց պակաս ժամկետով ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ մինչև ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը:
- 9.8. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադիրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չի ծանուցում այդ մասին Ապահովադիրին և միակողմանի լուծում է պայմանագիրը, և ազատվում Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի վճարման անսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:
- 9.9. Եթե Ապահովադիրն ապահովագրավճարը վճարում է պայմանագրի դադարեցումից կամ ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, և մինչև ապահովագրավճար վճարելն ապահովագրական պատահարը չի առաջացել, ապա պայմանագիրը չի համարվում ուժը կորցրած: Վճարումները կատարելու դեպքում պահանջվում է Ապահովագրված ՏՄ զննում և ՏՄ զննման ակտի կազմում: Ընդ որում՝ եթե հետագայում պարզվի, որ մինչև ապահովագրավճար վճարելը տեղի է ունեցել ապահովագրական պատահար, ապա Ապահովագրողը պատասխանատվություն չի կրի այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել պայմանագրի դադարումից մինչև դրա վերականգնումն ընկած ժամանակահատվածը և պայմանագիրը կհամարվի ուժը կորցրած:
- 9.10. Ապահովադիրը զրկվում է ապահովագրավճարի տարածամկետ վճարման իրավունքից, եթե մինչև ապահովագրավճարի հերթական մասի վճարումը Ապահովադիրը հայտարարել է ապահովագրական պատահարի առաջացման մասին «Կողոպուտ» ռիսկի գծով կամ «Վնաս» ռիսկի գծով «Լրիվ ոչնչացում» պայմաններով պահանջի կարգավորման դեպքում: Այդ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադիրից վաղաժամկետ վճարել ապահովագրավճարի չվճարված մասը կամ պահել չվճարված ապահովագրավճարի մասը ապահովագրական հատուցումն ենթակա գումարից:
- 9.11. Արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով՝ վճարման (փոխանցման) օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

9.12. Այն դեպքերում, երբ ՀՀ օրենսդրությամբ թույլատրված են Պայմանագրի կողմերի միջև հաշվարկները արտարժույթով, ապահովագրավճարը կարող է սահմանվել, ինչպես նաև վճարվել արտարժույթով:

## **10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

- 10.1. Ապահովագրության պայմանագիրը, եթե դրանում այլ բան նախատեսված չէ, կնքվում է մեկ տարի ժամկետով:
- 10.2. Ապահովագրության պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ուժի մեջ է մտնում՝
  - 10.2.1. Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի կանխիկ վճարման դեպքում՝ վճարման պահից, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի 00:00:
  - 10.2.2. Ապահովագրավճարն ամբողջությամբ կամ դրա առաջին մասի անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովադրի հաշվարկային հաշվից Ապահովագրողի կողմից նշված բանկում նրա հաշվարկային հաշվին գումարի փոխանցման օրվան հաջորդող օրվա 00:00, բայց ոչ շուտ, քան ապահովագրության պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի 00:00:
- 10.3. Պայմանագրի գործողությունն ավարտվում է տեղական ժամանակով Պայմանագրում որպես դրա ավարտի օր նշված օրվա ժամը 23:59-ին:
- 10.4. Ապահովագրողի առաջարկով ապահովագրության պայմանագրի երկարաձգման դեպքում Ապահովադրին տրվում է տասնհինգօրյա արտոնյալ ժամանակահատված հաջորդ տարվա ապահովագրավճարի կամ դրա առաջին չափաբաժնի վճարման համար: Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի կողմից առաջարկված պայմաններով: Եթե նոր ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարը վճարվում է մինչ նախորդ ապահովագրության պայմանագրի գործողության կամ արտոնյալ ժամանակահատվածի ավարտը, ապա նոր ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում նախորդի ավարտից հետո: Մինչ արտոնյալ ժամանակահատվածի ավարտը նոր ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարի կամ դրա առաջին չափաբաժնի չվճարման դեպքում ապահովագրության պայմանագիրը չի համարվում երկարաձգված:

## **11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՂԱԴԱԺԱՆԿԵՏ**

- 11.1. Ապահովագրության պայմանագիրը դադարում է հետևյալ դեպքերում՝
  - 11.1.1. Պայմանագրում սահմանված ժամկետը լրանալու դեպքում,
  - 11.1.2. Ապահովագրողի կողմից իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարման դեպքում:
- 11.2. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարում է, եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով:
- 11.3. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է հետևյալ դեպքերում՝
  - 11.3.1. իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման կամ ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան դեպքում,

11.3.2. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

11.4. Ապահովագրության պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարել Ապահովագրողի պահանջով ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

11.5. . Ապահովադիրն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին: Գրավոր ծանուցմանը պետք է կցվի նաև ապահովագրության պայմանագիրը: Ապահովագրության պայմանագիրը համարվում է դադարած Ապահովագրողի կողմից դիմումի ստացման օրվան հաջորդող 15-րդ օրվա 00:00, եթե ապահովագրության պայմանագրի դադարման ավելի ուշ ամսաթիվ դիմումի մեջ նշված չէ:

11.6. Ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով կնքված պայմանագրի և միանվագ վճարված ապահովագրավճարի պայմաններում Ապահովադիր ցանկությամբ ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադիրն պայմանագրի գործողության ժամկետի չլրացած օրերի համար համամասնորեն հաշվարկված ապահովագրավճարը՝ նվազեցված Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերով (ապահովագրավճարի 35%), ինչպես նաև վճարված և վճարման ենթակա հատուցումների չափով, եթե ապահովագրության պայմանագրում այլ բան նախատեսված չէ:

Վերադարձման ենթակա ապահովագրավճարը հաշվարկվում է , հետևյալ բանաձևով՝

$$VU = \frac{(U - 35\% * U) * n}{N} - Z,$$

U՝ ապահովագրության պայմանագրով վճարված ապահովագրավճարը,  
35%\*U՝ Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերը,  
n՝ ապահովագրության պայմանագրի գործողության ավարտին մնացած ամբողջական օրերի քանակ,  
Z՝ վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,  
N՝ ամբողջական օրերի քանակը, որոնց ժամկետով կնքվել է ապահովագրության պայմանագիրը,  
ՎԱ՝ վերադարձման ենթակա ապահովագրավճարը:

11.7. 11.6. կետում նշված հանգամանքներից տարբեր այլ հանգամանքներում ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում ապահովագրավճարը չի վերադարձվում:

11.8. Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Ապահովագրական պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Պայմանագրում որպես SU-ի սեփականատեր նշված անձից տարբերվող այլ անձի անունով: Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1016-րդ հոդվածի 1-ին կետի/: Նման հիմքի առաջացման դեպքում Ապահովադիրն այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնի Ապահովագրողին: Ընդ որում, Ապահովագրողը ապահովագրավճարի հաշվարկն իրականացնում է այդ մասին տեղեկանալու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ:

11.9. Պայմանագրի լուծման դեպքում, Ապահովագրողի համաձայնությամբ, վերադարձման ենթակա ապահովագրավճարը կարող է ուղղվել Ապահովագրողի հետ այլ պայմանագրի ապահովագրավճարի վճարման՝

առանց 11.6. կետում նշված հաստատուն գործառնական ծախսերի (ապահովագրավճարի 35%) նվազեցման:

11.10. Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են փոխադարձ համաձայնությամբ ցանկացած պահի լուծել ապահովագրության պայմանագիրը:

## **12. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

12.1. Ապահովադիրը պարտավոր է Պայմանագրի կնքման պահին տվյալ օբյեկտի գծով այլ ապահովագրական ընկերությունների հետ կնքված ապահովագրության այն պայմանագրերի մասին, որոնք գործելու են Պայմանագրի հետ միաժամանակ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, ինչպես նաև նույն կերպ Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի կնքումից հետո կնքվելիք ապահովագրության նույնօրինակ պայմանագրերի մասին՝ դրանց կնքումից հետո անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում: Տվյալ ծանուցման մեջ պետք է նշված լինի վերոհիշյալ ապահովագրական ընկերության անվանումը, այդ ապահովագրական ընկերության հետ կնքված ապահովագրության պայմանագրի համարը, պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրված ռիսկերը, ապահովագրական գումարը և չհատուցվող գումարը:

12.2. Եթե մինչև նույն ապահովագրության օբյեկտը մի քանի (երկու և ավել) Ապահովագրողների մոտ ապահովագրելու դեպքում ապահովագրական գումարը գերազանցում է ապահովագրված գույքի իրական արժեքը, ապա ապահովագրական հատուցման գումարը կրճատվում է համապատասխան ապահովագրական պատահարի գումարի և բոլոր Ապահովագրողների մոտ ապահովագրվող օբյեկտի ապահովագրության ընդհանուր գումարի հարաբերակցության համամասնությամբ:

## **13. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

13.1. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի վրա հասնելու դեպքում, Ապահովադիրը/Շահառուն, կամ նրա ներկայացուցիչը, կամ ՀՏ վարելու իրավունք ունեցող անձը, կամ վարորդը պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր ողջամիտ և մատչելի միջոցները պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու, ՀՏ-ի և դրանում գտնվող անձանց փրկելու, ՀՏ-ի հետագա վնասման կանխարգելման և լրացուցիչ վնասի առաջացմանը նպաստող պատճառների վերացման ուղղությամբ:

13.2. Ապահովագրված ՀՏ վնասման, ապահովագրված լրացուցիչ սարքավորման վնասման, կողոպուտի դեպքում («Վնաս» և «Լրացուցիչ սարքավորում» ռիսկեր) Ապահովադիրը և/կամ հատուկ տեխնիկան օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր են.

13.2.1. անհապաղ տեղեկացնել ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին և ՀՀ ճանապարհային երթևեկության

անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինն՝ Ոստիկանության ՃՈ մարմիններին կամ տվյալ պատահարը հավաստող իրավասու մարմինն, մասնավորապես՝

- ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինն, կամ Ոստիկանության ՃՈ մարմիններին և հանձնել ալկոտեստ,
- ապահովագրված ՀՏ-ի երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով վնասման, ապահովագրված ՀՏ մասերի կողոպուտի դեպքում՝ Ոստիկանության մոտակա բաժին,
- տարերային աղետների դեպքում՝ Արտակարգ իրավիճակների նախարարություն,
- հրդեհի դեպքում՝ Հրշեջ ծառայություն, և ապահովել ապահովագրական պատահարի փաստաթղթային ձևակերպումը:

13.2.1.1. Սույն Պայմանների 13.2.1. կետում նշված պահանջից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը և (կամ) հատուկ տեխնիկական օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին անհապաղ ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելը: Սույն կետով նախատեսված տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը և/կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պարտավոր են անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին հայտնել Ապահովագրողին:

13.2.1.2. Պայմանների 13.2.1. կետի համաձայն Ապահովագրողին զանգահարելու դեպքում Ապահովադիրը և/կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պետք է հայտնի ապահովագրական պատահարի վերաբերյալ նախնական տեղեկատվությունը, որը պետք է առնվազն պարունակի՝

13.2.1.2.1. Ապահովագրության պայմանագրի համարը,

13.2.1.2.2. տեղեկատվություն տրամադրելու պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ ապահովադիրին (ՀՏ օրինական հիմքով տիրապետող այլ անձին) հայտնի ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես՝

- ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրը և ժամը,
- ապահովագրական պատահարի վայրը (ճշգրիտ հասցեն կամ հնարավորինս պարզ նկարագրությունը),
- ապահովագրական պատահարի մասնակիցների վերաբերյալ տվյալներ (առնվազն նրանց քանակը, հեռախոսահամարները, պատահարին մասնակից այլ ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը),
- ապահովագրական պատահարի համառոտ նկարագիրը, պատահարի հետևանքով պատճառված վնասների բնույթը, վնասի մոտավոր մեծությունը (հնարավորության դեպքում),

13.2.2. Դեպքի վայրում սպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանմանը, անհնարինության դեպքում կատարել Ապահովագրողի ցուցումները:

13.2.3. ՀՏ-ն չտեղաշարժել

- տեղաշարժել միայն Ապահովագրողի թույլտվությամբ
- իրավասու մարմինների պահանջով:

13.2.4. Եթե Ապահովագրողի ներկայացուցիչը հայտնում է իր՝ դեպքի վայր չժամանելու մասին, ապա Ապահովադիրը/լիազորված վարորդը պետք է հետևի Ապահովագրողի ներկայացուցչի բանավոր ցուցումներին:

13.2.5. ՃՏՊ դեպքում ապահովագրված ՀՏ վարորդը դեպքից հետո 24 ժամվա ընթացքում չպետք է օգտագործի ոգելից խմիչք, քանի որ Ապահովագրողը կարող է պահանջել սթափության վիճակի զննություն, նույնիսկ եթե վարորդն այն արդեն անցել է:

13.2.6. Պատահարի շրջանակներում ապահովագրական հատուցում ստանալու դիմումը ներկայացնել 30 օրվա, հակառակ դեպքում պատահարի հայտը կփակվի (նշված ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառի դեպքում գործը ենթակա է վերաբացման):

13.2.7. Ապահովագրողին գրավոր տեղեկացնել ՀՏ վնասման, ինչպես նաև դեպքի՝ իրեն հայտնի բոլոր հանգամանքների դեպքի մասին իրեն հայտնի դառնալուց առավելագույնը 24 ժամվա ընթացքում,

13.2.8. Բացի ապահովագրական հատուցում ստանալու դիմումից, ներկայացված ապահովագրական հայտի կարգավորման համար Ապահովագրողին տրամադրել հետևյալ փաստաթղթերը.

- 1) Պայմանագիրը,
- 2) Ապահովագրողի մոտ Ապահովադիր/Շահառուի շահերի ներկայացման իրավունքը հաստատող լիազորագիր,
- 3) Ապահովագրված ՀՏ գրանցման վկայագիր, եթե առկա է,
- 4) Պատահարի ժամանակ ՀՏ վարող անձի վարորդական վկայական,
- 5) Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կողմից կազմված արձանագրություն/եզրակացություն՝ ՃՏՊ-ի մեղավոր անձի նշումով,
- 6) կամ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կողմից կազմված արձանագրություն՝ ՃՏՊ-ի մասնակիցների կողմից վարույթից հրաժարվելու մասին՝ երկու կողմերի բացատրություններով, ՃՏՊ վայրի սխեմա,
- 7) կամ դատարանի վճիռ, որոշում, դատավճիռ՝ ՃՏՊ-ի մեղավոր անձի նշումով,
- 8) Ապահովագրողի ներկայացուցչի կողմից մինչև դեպքի արդյունքում պատճառված վնասների վերացումը (վերանորոգումը) կազմված և նշված վնասները արձանագրող ապահովագրված գույքի զննման արձանագրություն:

**13.2.9. ՃՈ կողմից տրված եզրակացության, ինչպես նաև ներկայացված փորձագիտական եզրակացությունների հետ համաձայն չլինելու դեպքում, Ապահովագրական ընկերությունը կարող է նշանակել կրկնակի**

**փորձաքննություն: Կրկնակի փորձաքննության արդյունքում, եթե պարզ դարձավ, որ առաջին փորձաքննությունը պարունակել է սխալ տեղեկատվություն:**

13.2.10. Վնասված ՀՏ-ի գնման ժամը և տեղը համաձայնեցվում են Կողմերի միջև:

13.2.11. ՃՏՊ-ի այլ մասնակիցների կամ ապահովագրված ՀՏ-ի վնասման համար մեղավոր անձանց առկայության դեպքում վնասված ապահովագրված ՀՏ-ի գնման տեղը և ժամը համաձայնեցվում են Ապահովագրողի և պատահարի մեղավոր կողմի միջև, ընդ որում գնման ամսաթիվը նշանակվում է՝ հաշվի առնելով այն ժամանակը, որն անհրաժեշտ է շահագրգիռ անձանց գնմանը կանչելու և ժամանելու համար:

13.3. Ապահովագրված ՀՏ առևանգման դեպքում (ռիսկ «Առևանգում») Ապահովադիրը պարտավոր է.

13.3.1. Անհապաղ՝ Ապահովադիրին, նրա ներկայացուցչին կամ վարորդին ապահովագրված ՀՏ-ի առևանգման մասին հայտնի դառնալուն պես, հայտնել առևանգման վայրի ներքին գործերի մարմիններ:

13.3.2. Եթե ապահովագրված ՀՏ-ն ունի որոնման և հայտնաբերման համակարգ, անմիջապես ակտիվացնել այդ համակարգը և/կամ տեղեկացնել առևանգման մասին տվյալ համակարգը սպասարկող կազմակերպություն՝ վերջինիս հետ կնքված պայմանագրի պահանջներին համապատասխան:

13.3.3. 24 ժամվա ընթացքում գրավոր ծանուցմամբ, հեռագրով, ֆաքսիմիլային կապի միջոցով տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրված ՀՏ-ի առևանգման մասին:

13.3.4. Իրեն հայտնի դառնալուն պես անհապաղ Ապահովագրողին գրավոր ներկայացնել ՀՏ-ի առևանգման վերաբերյալ իրեն հայտնի բոլոր հանգամանքները:

13.3.5. Ապահովագրական պատահարի մասին դիմումի քննության համար Ապահովագրողին ներկայացնել հետևյալը.

- 1) Ապահովագրության պայմանագիր,
- 2) Ապահովագրողի մոտ շահերը ներկայացնելու իրավունք տվող լիազորագիր (իրավաբանական անձի համար).
- 3) ՀՏ-ն վարելու և օգտագործելու իրավունք տվող բոլոր լիազորագրերը, ապահովագրված ՀՏ-ի գրանցման և հաշվառման փաստաթղթերը (գրանցման վկայականը, տեխնիկական անձնագիրը և այլն), ՃՏՊ պահին ՀՏ վարող անձի վարորդական վկայականը,
- 4) Օրենքով համապատասխան դեպքը քննելու իրավասություն ունեցող պետական մարմնի (պաշտոնատար անձի) կողմից տրված փաստաթուղթ կամ փաստաթղթեր (տեղեկանք, արձանագրություն, վճիռ, որոշում, դատավճիռ) կամ նրանց պատշաճ կերպով հաստատված կրկնօրինակները, որոնցում մասնավորապես նշված են.
  - ՀՏ առևանգման վայրը, ժամը, հանգամանքներն ու հետևանքները, ապահովագրված գույքի կորստի մասին հաղորդագրության հասնելը նշված մարմիններ (պաշտոնատար անձանց), ապահովագրված հատուկ տեխնիկայի նկարագրությունը (մակնիշը, մոդելը, գրանցման համարը),

- առևանգմանը մասնակից անձանց, էթե նրանք հայտնաբերվել են, ամբողջական անուններն ու մշտական բնակության հասցեները (գտնվելու վայրը),
  - օրենքի նորմերը, որոնց հիման վրա հարուցվել է քրեական գործ գողության, կողոպուտի, ավագակության հատկանիշներով:
- 5) Արտադրող գործարանի կողմից արտադրված բոլոր բանալիների հավաքածուները, հակաառևանգման, պահակային, որոնողական համակարգերի հեռակառավարման վահանակների (կախազարդերի, քարտերի, բանալիների) բոլոր հավաքածուները:
- 6) Փաստաթղթեր (փաստաթուղթ), որոնք երաշխավորում են, որ ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրված գույքի հայտնաբերման դեպքում (այդ թվում պայմանագրի գործողության ավարտից հետո) այդ հատուցումը կամ ապահովագրված գույքը և բոլոր իրավունքները դրա նկատմամբ կանցնեն Ապահովագրողին: Այդպիսի փաստաթղթեր մասնավորապես կարող են լինել Ապահովագրողի կողմից Ապահովադրի, Շահառուի և ապահովագրված գույքի սեփականատիրոջ հետ կնքված համապատասխան անժամկետ համաձայնագրերը, ինչպես նաև Ապահովադրի, Շահառուի կամ ապահովագրված ՀՏ-ի սեփականատիրոջ կողմից տրված գրավոր պարտավորագիրը:

13.3.6. 13.3.5. կետի 3) և 5) ենթակետերում նշված Ապահովագրողին փոխանցված փաստաթղթերը և պարագաները վերադարձվում են Ապահովադրին (Շահառուին) վերջինիս պահանջով ՀՏ-ի հայտնաբերման և Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրամադրված ապահովագրական հատուցման վերադարձից հետո:

13.4. Պայմանագրի 13.2.-13.3. կետերով նախատեսված պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հանդիսանում է ապահովագրական հատուցման մերժման հիմք:

13.5. Ապահովագրության պայմանագրի յուրաքանչյուր ռիսկի գծով կողմերի համաձայնությամբ կարող է նախատեսվել ապահովագրական պատահարի տեղի ունենալը ապացուցող բոլոր փաստաթղթերի կամ նրանց մի մասի փոխարինումը ապահովագրական պատահարի մասին արձանագրությամբ: Ապահովագրական պատահարի մասին արձանագրությունը կազմվում է Ապահովագրողի կողմից Ապահովադրի և/կամ Շահառուի և դեպքի հանգամանքներին ծանոթ այլ անձանց վկայությունների հիման վրա: Ապահովագրողն իրավասու է նաև ազատել Ապահովադրին նշված փաստաթղթերի փաթեթի մի մասը ներկայացնելու պարտականությունից:

13.6. «Վնաս» ռիսկի գծով պահանջի կարգավորման ժամանակ Ապահովագրողի հետ համագործակցող ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայաններից որևէ մեկում ՀՏ-ին պատահարի արդյունքում պատճառված վնասվածքների վերանորոգման դեպքում, տվյալ կայանի հետ հարաբերություններում Ապահովադրի իրավասու ներկայացուցիչներն են համարվում ապահովագրության պայմանագրում նշված ՀՏ-ն վարելու լիազորություն ունեցող բոլոր անձինք:



**14. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

14.1. Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին ապահովագրական պատահարի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումից, Ապահովագրողի կողմից վնասված ՀՏ-ի զննումից և զննման արձանագրության կազմումից, պատահարի պատճառների, հանգամանքների, դրա արդյունքում հասցված վնասի չափի և բնույթի որոշումից և Ապահովագրողի կողմից դեպքը ապահովագրական պատահար ճանաչելուց հետո: Ընդ որում ապահովագրական պատահարի ի հայտ գալու պատճառները և վնասի չափը հիմնավորող փաստաթղթերի տրամադրման պարտականությունը դրված է Ապահովադրի վրա:

14.1.1. Բոլոր ապահովագրական պատահարների համար միասին տրվող ապահովագրական հատուցման չափը, ներառյալ լրացուցիչ ծախսերը, չպետք է գերազանցի Պայմանագրով և/կամ դրան կից լրացուցիչ համաձայնագրով սահմանված ապահովագրական գումարը:

14.1.2. Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել ՀՏ-ի շուկայական արժեքը:

14.1.3. Պայմանագրով սահմանված լրացուցիչ սարքավորումների ապահովագրական գումարը չի կարող գերազանցել հատուկ տեխնիկայի համար սահմանված ապահովագրական գումարը:

14.1.4. Եթե Պայմանագրով այլ բան սահմանված չէ, ապա յուրաքանչյուր ապահովագրական հատուցում վճարելուց հետո ապահովագրական գումարը համապատասխան օբյեկտի համար նվազեցվում է ապահովագրական գումարից կատարված հատուցման չափով՝ ներառյալ տվյալ պատահարի կարգավորման համար կատարված լրացուցիչ ծախսերը:

14.1.5. Ապահովադիրն իրավասու է վերականգնել ապահովագրական գումարի նախկին/սկզբնական չափը գործող Պայմանագիրը հավելելու միջոցով: Այս դեպքում Ապահովադիրը ապահովագրական հատուցում վճարելու հետևանքով ապահովագրական գումարի նվազած մասի համար վճարում է ապահովագրավճար՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

14.2. Պայմանագրին և սույն Պայմաններին համապատասխան Ապահովադրի կողմից Ապահովագրական պատահարի առաջացումը հաստատող փաստերի, պատճառների և վնասի չափի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից հետո Ապահովագրողը առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է Ապահովագրական հատուցման վճարման/մասնակի վճարման կամ վճարումը մերժելու մասին որոշում:

14.3. Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Պայմանագրով Ապահովագրողի հաշվարկային հաշվին ապահովագրավճարի փոխանցումից ոչ շուտ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ եթե Ապահովագրողը իր հայեցողությամբ որոշում չի կայացրել անկախ ապահովագրավճարի վճարված լինելու հանգամանքից ապահովագրական հատուցման տրամադրման մասին:

Եթե այլ ժամկետներ նախատեսված չեն ապահովագրության պայմանագրով, Ապահովագրական հատուցումն իրականացվում է.

14.3.1. Ապահովագրված ՀՏ-ի առևանգման դեպքում՝ Ապահովադրի կողմից Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման և առևանգված ապահովագրված ՀՏ-ի գտնվելու դեպքում Կողմերի

փոխհարաբերությունների վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի ստորագրման օրվանից հաշված՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

14.3.2. Բոլոր մնացած դեպքերում՝ Ապահովադրի կողմից Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման օրվանից հաշված՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

14.4. Դեպքն ապահովագրական պատահար ճանաչելու և ապահովագրական հատուցում կատարելու հիմք են հանդիսանում սույն Պայմանների 11-րդ բաժնում նշված Ապահովադրի (Շահառուի) կողմից տրամադրվող փաստաթղթերը:

14.5. Ապահովագրված ՀՏ-ի առևանգման կամ ոչնչացման դեպքում ապահովագրական հատուցման վճարումը ՀՏ-ի սեփականատեր չհանդիսացող Ապահովադրին (Շահառուին) իրականացվում է ապահովագրված ՀՏ-ի սեփականատիրոջ կողմից վերջինիս տրված նոտարական կարգով վավերացված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք տրամադրող լիազորագրի առկայության դեպքում:

14.6. Ապահովագրված ՀՏ-ի վնասման դեպքում Ապահովադրին (Շահառուին) վճարվում է ապահովագրական հատուցում կամ նրա ցանկությամբ ՀՏ-ն ուղարկվում է տեխնիկական սպասարկման կայան, որտեղ իրականացվում է ապահովագրված ՀՏ-ի վերանորոգումը:

14.7. Ապահովագրության պայմանագրում որևէ ռիսկի գծով ֆրանշիզա սահմանված լինելու դեպքում, այն յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում հանվում է տվյալ ռիսկի գծով տրամադրվող ապահովագրական հատուցումից:

14.8. Առևանգված ՀՏ-ի համար ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է սույն Պայմանների 13.3.5. կետում նշված բոլոր փաստաթղթերի և առարկաների Ապահովագրողին փոխանցելուց հետո և առևանգված ՀՏ-ի գտնվելու պարագայում Ապահովադրի հետ Կողմերի փոխհարաբերությունների վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի կնքումից հետո:

14.9. Ապահովագրողի հետ համագործակցող վերանորոգող ընկերության կողմից տրամադրված վերանորոգման հաշիվների հիման վրա, որտեղ վերանորոգվել է վնասված ապահովագրված ՀՏ-ն, կամ

14.9.1. Ապահովադրի ընտրությամբ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման այն կայանի կողմից տրամադրված հաշիվների հիման վրա, որտեղ վերանորոգվել է վնասված ՀՏ-ն: Այս դեպքում Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել Ապահովագրողին վերանորոգման հաշիվ-ապրանքագրի կամ ծախսերի հաշվարկման բնօրինակը (եթե վերոհիշյալ փաստաթղթերը տրամադրվել են այլ լեզվով, ապա դրանց վավերացված հայերեն թարգմանությամբ տարբերակը):

14.10. Ապահովագրողը և Ապահովադիրը կարող են համաձայնության գալ ապահովագրական հատուցում վճարելու փոխարեն վերանորոգել ՀՏ Ապահովագրողի գործընկեր սպասարկման կենտրոնում:

14.11. Հատուցման ենթակա են փոխարինում պահանջող դետալների և հանգույցների արժեքը, վնասված դետալների և հանգույցների փոփոխման և վերանորոգման աշխատանքների արժեքը, օգտագործվող նյութերի արժեքը: Հատուցման ենթակա է միայն այն դետալների և հանգույցների փոփոխման արժեքը, որոնց վնասումը տեղի է ունեցել ապահովագրական պատահարի հետևանքով: Ընդ որում՝ ապահովագրված ՀՏ-ի վնասված դետալների և հանգույցների փոփոխումը տեղի է ունենում միայն այն պայմանով, եթե դրանք վերանորոգման արդյունքում չեն կարող բերվել հետագա օգտագործման համար պիտանի վիճակի կամ եթե այդ վերանորոգումը տնտեսապես

աննպատակահարմար է, քանզի դրա արժեքը գերազանցում է փոփոխման արժեքը (հաշվի առնելով դետալների, օգտագործվող նյութերի և աշխատանքների արժեքը):

14.12. ՀՏ-ի շարժման ընթացքում դրա անվադողերի, անվասկավառակների կամ անիվների դեկորատիվ կափարիչների վնասման արդյունքում առաջացած վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ առկա են տվյալ ապահովագրական պատահարով պայմանավորված ՀՏ-ի այլ վնասներ:

14.13. Վնասի չափի հաշվարկի կազմման ժամանակ կիրառվում են դետալների և վնասի վերականգնման աշխատանքների գործող միջին շուկայական գները :

14.14. Ապահովադիրը հատուցում է նաև այն թաքնված վնասների և թերությունների վերացման հետ կապված ծախսերը, որոնք առաջացել են ապահովագրական պատահարի արդյունքում, հայտնաբերվել ՀՏ-ի վերանորոգման ժամանակ և հաստատվել են փաստաթղթերով:

14.15. Թաքնված վնասների և թերությունների հայտնաբերման դեպքում Ապահովադիրը մինչև դրանց վերացումը պարտավոր է գրավոր ծանուցել այդ մասին Ապահովագրողին նրա կողմից լրացուցիչ զննման արձանագրություն կազմելու համար:

14.16. Հատուցման ենթակա չեն հետևյալ ծախսերը.

14.16.1. ՀՏ -ի տեխնիկական և երաշխիքային սպասարկման,

14.16.2. ՀՏ-ի ձևավորման և վերասարքավորման, նրա առանձին մասերի և հանգույցների մաշվածության, տեխնիկական թերության և այլնի պատճառով դրանց փոխարինման և վերանորոգման դեպքում ինչպես առանձին մասերի և հանգույցների, այնպես էլ դրանց հետ կապված իրականացվող աշխատանքների ծախսերը,

14.16.3. Վնասված ՀՏ վերանորոգումն իրականացնող ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման սրահում՝ ՀՏ վերանորոգման համար անհրաժեշտ պահեստային մասերի և դետալների բացակայության դեպքում վերանորոգման փոխարեն տվյալ հանգույցների և ագրեգատների փոփոխման արդյունքում առաջացած ծախսերը:

14.17. Եթե ապահովագրական պատահարի արդյունքում ՀՏ-ն զրկվել է սեփական ընթացքով շարժվելու հնարավորությունից, Ապահովագրողը հատուցում է Ապահովադիրին վնասված ՀՏ մինչև կայանման վայր տեղափոխելու համար իրականացված և համապատասխան փաստաթղթով ամրագրված ծախսերը, սակայն ոչ ավել քան մեկ տեղափոխություն յուրաքանչյուր հայտի գծով և ապահովագրական գումարի 1%-ից ոչ ավել «Վնաս» ռիսկի գծով: Եթե վնասված ՀՏ տեղափոխումը, ինչպես նաև Վնասի նվազեցման ուղղությամբ այլ անհրաժեշտ ծախսերը կատարվել են Ապահովագրողի հանձնարարությամբ, ապա դրանք հատուցվում են ամբողջ ծավալով՝ փաստացի կատարված աշխատանքների և ծառայությունների հաշիվների հիման վրա: Սույն ծախսերը Ապահովադիրը պարտավոր է համաձայնացնել Ապահովագրողի հետ:

14.18. 14.17 կետում նշված ծախսերը ենթակա են հատուցման միայն այն դեպքում՝

14.18.1. երբ վնասի գումարը գերազանցում է Պայմանագրում սահմանված չհատուցվող գումարի չափը:

14.18.2. 14.17. կետում նշված ծախսերն Ապահովագրական գումարից նվազեցվում են միայն հատուցման դեպքում՝ համաձայն 14.14. կետի:

14.19. ՀՏ-ի լրիվ, փաստացի կամ կոնստրուկտիվ ոչնչացման դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ ՀՏ-ի վերանորոգման արժեքը

ապահովագրական հատուցման տրամադրման պահին գերազանցում է նրա իրական արժեքի 80%-ը, ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է «Լրիվ ոչնչացում» պայմաններով: 14.17. կետում նշված ծախսերը, ՀՏ-ի լրիվ, փաստացի կամ կոնստրուկտիվ ոչնչացման դեպքում, կարող են գերազանցել Պայմանագրում նշված Ապահովագրական գումարի առավելագույնը 5%-ը: Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել «Լրիվ ոչնչացում» պայմաններով ապահովագրական պատահարի կարգավորման այլ չափանիշներ:

14.20. «Լրիվ ոչնչացում» պայմաններով ապահովագրական հայտի կարգավորման դեպքում հնարավոր է հատուցման վճարում հետևյալ 2 տարբերակներից որևէ մեկով.

14.20.1.«Վնաս» ռիսկի գծով սահմանված ապահովագրական գումարի չափով: Այդ դեպքում ՀՏ-ն Ապահովագրողին փոխանցելու համար պետք է Ապահովագրողի կողմից հանվի ՊԱՏ մարմիններում հաշվառումից: Ընդ որում Ապահովագրողի ծախսերը ՀՏ-ն հաշվառումից հանելու ուղղությամբ ապահովագրությամբ չեն ծածկվում: ՀՏ-ն Ապահովագրողին փոխանցելու ժամանակ պետք է կազմվի գնման համապատասխան արձանագրություն՝ ՀՏ կոմպլեկտացիայի նշմամբ:

14.20.2.«Վնաս» ռիսկի գծով ապահովագրական գումարի չափով՝ ՀՏ-ի պիտանի մնացորդների արժեքի մասհանմամբ, պայմանով, որ ՀՏ-ի մնացորդները մնում են Ապահովագրողի մոտ:

14.21. «Լրիվ ոչնչացում» պայմաններով ապահովագրական հատուցման վճարման տարբերակը որոշվում է Ապահովագրողի և Ապահովագրողի համաձայնությամբ:

14.22. Եթե ապահովագրված ՀՏ-ի գծով պահանջը կարգավորվում է «Լրիվ ոչնչացում» պայմաններով, սակայն նշված ՀՏ-ն չի կարող օտարվել սեփականատիրոջից երրորդ անձանց օգտին մաքսային և այլ մարմինների կողմից դրա վրա դրված սահմանափակումների պատճառով, ապա պահանջը այդպիսի ՀՏ-ի գծով կարող է կարգավորվել 14.20.2. կետում նշված պայմաններով:

14.23. «Լրիվ ոչնչացում» պայմաններով պահանջի կարգավորման մասին որոշման ընդունման համար Ապահովագրողն անց է կացնում ՀՏ վերանորոգման արժեքի նախնական գնահատում:

14.24. Նախնական գնահատումն իրականացվում է Ապահովագրողի համապատասխան աշխատակցի կողմից իրականացված վնասված ՀՏ-ի գնման արձանագրության հիման վրա, , ինչպես նաև Ապահովագրողի կողմից ՀՏ-ի վերանորոգման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ արժեքի հաշվարկման հիման վրա:

14.25. Ապահովագրական հատուցման հաշվարկի ժամանակ հաշվի չի առնվում ՀՏ բացակայող կամ վնասված այն դետալների կամ ագրեգատների արժեքը, որոնց բացակայությունը կամ վնասվելը ուղիղ կապ չունի դիտարկվող ապահովագրական պատահարի հետ:

- 14.26. Առևանգված ՀՏ-ի համար ապահովագրական հատուցման վճարման դեպքում կամ «Վնաս» ռիսկի գծով «Լրիվ ոչնչացում» պայմանների հիման վրա ապահովագրական հատուցման վճարման դեպքում ապահովագրված մյուս ռիսկերի գծով ապահովագրավճարի վերադարձ չի կատարվում:
- 14.27. «Վնաս» ռիսկի գծով ապահովագրական հատուցման վճարումից հետո, բացի «Լրիվ ոչնչացում» պայմանովապահովագրական հատուցման տրամադրման դեպքի, ապահովագրության պայմանագիրը այդ ռիսկի գծով շարունակում է գործել մինչև նրա գործողության ժամկետի ավարտը: Ընդ որում՝ ապահովագրական գումարը տվյալ ռիսկի գծով նվազում է ապահովագրական հատուցման գումարի չափով:
- 14.28. «Լրացուցիչ սարքավորում» ռիսկի գծով Վնասի չափը որոշվում է.
- լրացուցիչ սարքավորման վնասման դեպքում դրա վերանորոգման արժեքի չափով,
    - 14.28.1. Առևանգված կամ ոչնչացված լրացուցիչ սարքավորման դիմաց ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրության պայմանագրի գործողությունը դրա նկատմամբ դադարում է:
- 14.29. Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է ՀՀ դրամով:

## 15. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 15.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

- 15.1.1. Ստանալ ապահովագրական հատուցում ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի կամ պատասխանատվության սահմանաչափի սահմաններում, եթե շահառուն այլ անձ չէ:
- 15.1.2. Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում նշված վարելու լիազորություն ունեցող անձանց ցուցակում փոփոխություն մտցնել: Նման փոփոխությունը կատարելու համար Ապահովադիրը պետք է փոփոխություն կատարելու ենթադրվող օրվանից ոչ պակաս, քան 3 օր առաջ գրավոր դիմում ներկայացնի Ապահովագրողին, որը դառնում է ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը: Այդ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լրացուցիչ ապահովագրավճարի վճարում, եթե առկա է ռիսկի մեծացում:
- 15.1.3. Փոխարինել ապահովագրության պայմանագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ այդ մասին փոփոխության իրակացման ցանկալի օրվանից ոչ պակաս, քան 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե նա արդեն կատարել է Պայմանագրով որևէ պարտականություն կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցում ստանալու մասին պահանջ:
- 15.1.4. Ապահովագրության պայմանագրի կորստի, վնասման կամ ոչնչացման դեպքում պահանջելու պայմանագրի նոր օրինակ: Պայմանագրի նոր օրինակի ստացումից հետո կորած ապահովագրական պայմանագիրը համարվում է անվավեր և դրա հետ կապված վճարումներ չեն իրականացվում:

### 15.2. Ապահովադիրը պարտավոր է՝

- 15.2.1. Ապահովագրության պայմանագրի կնքման, դրա վերակնքման, ապահովագրության պայմանների փոփոխման ժամանակ, ինչպես նաև ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ առկա ՀՏ վնասների վերացման դեպքում ՀՏ-ն տրամադրել Ապահովագրողին գնման և/կամ

լուսանկարման համար: Ապահովագրողը համապատասխան գրառում է կատարում ապահովագրության պայմանագրում նշված վնասների վերացման վերաբերյալ: Վերանորոգված ՀՏ-ի կրկնակի գնման չներկայացնելու դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում ապահովագրված ՀՏ-ի ՀՏ ապահովագրության դիմումի կամ գնման արձանագրության (ՀՏ նկարագրություն) մեջ նշված վնասված դետալների հետագա վնասման, ոչնչացման դեպքերի համար: Պարտադիր չի համարվում վերանորոգված ՀՏ-ն Ապահովագրողի կողմից կրկնակի գնման ուղարկելը, եթե վնասված ապահովագրված ՀՏ-ն վերականգնվել է Ապահովագրողի հետ համագործակցող Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայանում, ինչպես նաև պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում:

- 15.2.2. Ապահովագրության պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,
- 15.2.3. Երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին ՀՏ-ն ՃՈ կամ ԱԲՆ հաշվառումից հանելու, գրանցման փաստաթղթերի, գրանցման համարանիշների փոփոխման մասին՝ այդ փոփոխությունները ապահովագրության պայմանագրում ներառելու համար:
- 15.2.4. Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրված ՀՏ պահպանել սարքին վիճակում, ձեռնարկել նախագուշակյան միջոցառումներ ապահովագրված ՀՏ-ին, վարորդի և ուղևորների կյանքին և առողջությանը վնասի պատճառման կանխարգելման ուղղությամբ:
- 15.2.5. Ապահովագրության պայմանագրի կնքումից անմիջապես հետո տեղեկացնել Շահառուին կամ ապահովագրության պայմանագրով ապահովագրված ՀՏ վարելու լիազորություն ունեցող անձանց ապահովագրության սույն Պայմանների և ապահովագրության պահանջների մասին:
- 15.2.6. Ամբողջ ծավալով կատարել ապահովագրության պայմանագրի և ապահովագրության սույն Պայմանների պահանջները. Շահառուի կամ Պայմանագրով ապահովագրված ՀՏ վարելու լիազորություն ունեցող անձանց կողմից ապահովագրության պայմանագրի և ապահովագրության սույն Պայմանների խախտումը դիտարկվում է որպես սույն Պայմանների խախտում Ապահովադրի կողմից:
- 15.2.7. Անհապաղ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, եթե առևանգված ապահովագրված ՀՏ-ն գտնվել ու վերադարձվել է Ապահովադրին, կամ եթե Ապահովադրին հայտնի է դարձել առևանգված ապահովագրված ՀՏ գտնվելու վայրը:
- 15.2.8. Եթե առևանգված ապահովագրված ՀՏ գտնվել է և վերադարձվել է Ապահովադրին, մեկ ամսվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել առևանգված ՀՏ -ի դիմաց ստացած ապահովագրական հատուցումը:
- 15.2.9. Անհապաղ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին այն մասին, որ պատճառված վնասն ամբողջությամբ կամ մասնակի հատուցվել է մեղավոր անձի կողմից:
- 15.2.10. Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումն ամբողջ ծավալով կամ մասնակի, եթե ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ժամկետների ընթացքում հայտնաբերվել են հանգամանքներ, որոնք օրենքով և սույն ապահովագրության Պայմանների համաձայն ամբողջությամբ կամ մասնակիորեն զրկում են Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:
- 15.2.11. Զթողնել հաշվառման փաստաթղթերը (ՀՏ գրանցման վկայականը և ՀՏ անձնագիրը), ՀՏ բանալիների և հակաառևանգման համակարգերի հեռակառավարման վահանակները ապահովագրված ՀՏ-ում:

- 15.2.12. Ապահովագրողի պահանջով հանձնել նրան ապահովագրված ՀՏ-ի վերանորոգման ընթացքում փոխարինված վնասված դետալներն ու հանգույցները:
- 15.3. Ապահովագրողն իրավունք ունի`
- 15.3.1. Ստուգել Ապահովագրողի կողմից ներկայացված տեղեկությունների իսկությունն ու ամբողջականությունը:
  - 15.3.2. Պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխում կամ ապահովագրական ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի վճարում, եթե նրան հայտնի է դարձել կամ եթե նա տեղեկացվել է Ապահովագրողի (Շահառուի) կողմից ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող հանգամանքների մասին (ապահովագրության սույն Պայմանների 16.1. և 16.2. կետեր),
  - 15.3.3. Ապահովագրված ՀՏ-ին պատճառված վնասի հանգամանքները, պատճառները, չափը և բնույթը պարզելու համար Ապահովագրողն իրավունք ունի համապատասխան իրավասու մարմիններին, որոնք կարող են տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը կատարել անհրաժեշտ հարցումներ:
  - 15.3.4. Ապահովագրողից, Շահառուից կամ ՀՏ վարելու լիազորություն ունեցող անձից պահանջել ապահովագրական պատահարի և դրա առաջացման հանգամանքների հաստատման համար անհրաժեշտ տեղեկություններ,
  - 15.3.5. Անցկացնել վնասված ՀՏ զննում և քննություն,
  - 15.3.6. Հետաձգել ապահովագրական հատուցման վճարումը ապահովագրական պատահարի բոլոր հանգամանքները պարզելու համար (այդ թվում մինչև իրավասու մարմիններ ուղարկված հարցումների պատասխանների ստանալը)` Ապահովագրողին գրավոր տեղեկացնելով այդ մասին:
  - 15.3.7. Վաղաժամկետ լուծել ապահովագրության պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի, Շահառուի կամ ապահովագրության պայմանագրով ապահովագրված ՀՏ վարելու լիազորություն ունեցող անձանց կողմից ապահովագրության պայմանագրի պայմանների խախտման դեպքում` խախտումը հայտնաբերելու պահից 3-ամսյա ժամկետի ընթացքում:
  - 15.3.8. Մերժել Ապահովագրողին ապահովագրական հատուցման վճարումը հետևյալ դեպքերում`
    - 15.3.8.1. Ապահովագրողի կողմից կեղծ տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրման դեպքում,
    - 15.3.8.2. Ապահովագրողի կողմից վնասի պատճառման համար մեղավոր անձի կամ ապահովագրական ընկերության կողմից, որում ապահովագրված է մեղավորի քաղաքացիական պատասխանատվությունը հատուցման ստացման,
    - 15.3.8.3. Մինչ վերանորոգման անցկացումը վնասված ՀՏ Ապահովագրողին զննման չտրամադրելու,
    - 15.3.8.4. Ապահովագրության պայմանագրի և/կամ ապահովագրության սույն Պայմանների պահանջների Ապահովագրողի կողմից խախտելու դեպքում:
  - 15.3.9. Ապահովագրության պայմանագրի պայմաններով կարող են նախատեսվել մերժման այլ հիմքեր:
- 15.4. Ապահովագրողը պարտավոր է.
- 15.4.1. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին ծանոթացնել սույն Պայմանների հետ և հանձնել նրան մեկ օրինակ:
  - 15.4.2. Դեպքը ապահովագրական պատահար ճանաչելու դեպքում կատարել ապահովագրական հատուցման վճարում ապահովագրության սույն Պայմանների 14.3. կետում նշված ժամկետներում:

- 15.4.3. Գրավոր տեղեկացնել Ապահովադրին (Շահառուին) դեպքը ապահովագրական պատահար չճանաչելու կամ ապահովագրական հատուցման չափը նվազեցնելու վերաբերյալ՝ ներկայացնելով հիմքերը::
- 15.4.4. Չհրապարակել Ապահովադրի, Շահառուի մասին իրեն հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
- 15.4.5. Ապահովադրին/Շահառուին տեղեկացնել ապահովագրական գումարի նվազման դեպքերի և դրա հիմնավորումների մասին:

## **16. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ**

16.1. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ՀՏ շահագործման և օգտագործման պայմաններում առաջացած փոփոխությունների և այլ դեպքերի մասին, եթե դրանք կարող են էական ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի մեծացման վրա, ինչպիսին են.

16.1.1. ՀՏ վարձակալության, լիզինգի, գրավի հանձնումը,

16.1.2. ՀՏ վարելու կամ օգտագործելու մասին լիազորագրի տրամադրումը անձին, ով ապահովագրության պայմանագրով ՀՏ վարելու լիազորություն չունի,

16.1.3. Ապահովագրված ՀՏ-ի գրանցման փաստաթղթերի, բանալիների, ազդանշանային համակարգի, հեռակառավարման վահանակի, գրանցման համարանիշների կորուստը կամ կողոպուտը,

16.1.4. Օգտագործելու և պահելու պայմանների էական փոփոխությունը:

16.2. Ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ռիսկի աստիճանի մեծացմանը համամասնորեն լրացուցիչ ապահովագրավճարի վճարում :

16.3. Եթե Ապահովադիրը (Շահառուն) առարկում է ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխության կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարման հարցում, Ապահովագրողն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միակողմանի վաղաժամկետ դադարեցնել պայմանագիրը և ետ չվերադարձնել վճարված ապահովագրավճարը:

## **17. ՍՈՒԲՐՈՉԱՑԻՍ**

- 17.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա (կամ Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:
- 17.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:
- 17.3. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցները՝ հայտնելով Ապահովագրողին փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- 17.4. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ



այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

- 17.5. Եթե Ապահովադիրը կամ Շահառուն երրորդ անձանցից ստացել է պատճառված Վնասի դիմաց հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմանագրի և սույն ապահովագրության Պայմանների պայմաններով նախատեսված վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացած գումարի տարբերությունը:
- 17.6. Բոլոր այն դեպքերում, երբ Ապահովագրական հատուցումը տրամադրելուց հետո պարզ է դարձել, որ դեպքն Ապահովագրական պատահար չէր և/կամ ենթակա չէր հատուցման, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից/Շահառուից ետ պահանջել վճարված գումարը և լրացուցիչ ծախսերը:

## 18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

18.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրերից բխող վեճերը քննվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով: Վնասի չափի և դրա պատճառների վերաբերյալ վեճերի առաջացման դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փորձաքննության անցկացում: Լրացուցիչ փորձաքննությունն անց է կացվում այն պահանջած կողմի հաշվին: Եթե փորձաքննությունն անց է կացվել Ապահովադրի հաշվին, և փորձաքննության արդյունքները ճանաչվել են Ապահովագրողի կողմից, ապա վերջինս հատուցում է Ապահովադրին փորձաքննության եզրակացության մեջ նշված վնասի չափով: Ընդ որում՝ հատուցման ընդհանուր չափը չի կարող գերազանցել ապահովագրական պատահարի պահին Ապահովագրողի պատասխանատվության ընդհանուր չափը: